ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 03/2023-2024

ԳԱՐԵԳԻՆ ԻՍԱԽԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 10 հունվարի, 2024 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Արամայիս Փաշինյանի, Մարիամ Գալստյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Գարեգին Իսախանյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 2-ին հարուցված թիվ 03/2023 վարույթի նյութերը.

պարզեց.

1. 2023 թվականի հոկտեմբերի 26-ին Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի կողմից Հանձնաժողովին հասցեագրվել է թիվ 01//19720-2023 գրությունը (այսուհետ՝ Գրություն) Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ

Գարեգին Իսախանյանի կողմից «Դատախազության մասին» օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները պահպանված կամ չպահպանված լինելու վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով:

2. Գրությամբ ներկայացվել է հետևյալ տեղեկատվությունը.

2023 թվականի օգոստոսի 10-ին ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչություն է ստացվել Պետական եկամուտների կոմիտեի հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության պետի պաշտոնակատար Տիգրան Նազարբեկյանի հաղորդումը՝ հետևյալ բովանդակությամբ. «ՊԵԿ իրավաբանական վարչության պետի թիվ Ն/11-5/138289-2022 գրությամբ «ԲԱՐ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ , պետական հաշվառման համար՝ , գրանցման ամսաթիվ՝) վերաբերյալ փաստաթղթեր են ստացվել այն մասին, որ Պետական եկամուտների կոմիտեի կողմից 2022 թվականի օգոստոսի 3-ին դիմում է ներկայացվել ՀՀ սնանկության դատարան՝ ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջի վերաբերյալ:»: Քննիչը 2023 թվականի օգոստոսի 10-ին վարույթ չնախաձեռնելու մասին գրավոր իրազեկում է ուղարկել Արարատի մարզի դատախազություն, որով արձանագրել է, որ բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 288-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը (ընկերությանը պատկանող գույքը ոչնչացնելու, անհայտ կամ շինծու գործարքներ կնքելու կամ այլ եղանակով անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծման կամ դրանց չափի ավելացման), ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ այլ հանցակազմ: Վարույթ չնախաձեռնելու մասին գրավոր իրազեկման օրինականությունը 2023 թվականի օգոստոսի 14-ին հսկող դատախազի կողմից հաստատվել է, և վարույթի նյութերը վերադարձվել են ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչություն:

Սնանկության դատարանը 2022 թվականի նոյեմբերի 16-ի վճռով մերժել է «ԲԱՐ» ՍՊ ընկերությանը (այսուհետ նաև՝ Ընկերություն) սնանկ ճանաչելու՝ Պետական եկամուտների կոմիտեի պահանջը (Գործ N ՍՆԴ/2291/04/22):

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության կողմից վարույթ չնախաձեռնելու արձանագրությանը կցված փաստաթղթերի ուսումնասիրությամբ

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության կողմից վարույթ չնախաձեռնելու արձանագրությանը կցված փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ «ԲԱՐ» ՍՊ ընկերության 53% բաժնեմասի սեփականատեր է հանդիսանում Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Գարեգին Իսախանյանը: Միաժամանակ, http://cpcarmenia.am/hy/declarations-registry/ կայքէջում վերջինիս կողմից ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրությունից պարզվել է, որ թեև «ԲԱՐ» ՍՊ ընկերության 53% բաժնեմասի վերաբերյալ տվյալներ ներառված են եղել Գարեգին Իսախանյանի կողմից ներկայացված 2022 թվականի տարեկան հայտարարագրում, սակայն Ընկերության՝ այլ անձի կողմից կառավարվելու, հավատարմագրային կառավարման հանձնված լինելու մասին տվյալներ ներկայացված չեն եղել:

Արարատի մարզի դատախազության դատախազ Վ. Առաքելյանի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 23-ին ներկայացված հաղորդման ուսումնասիրության արդյունքում Գլխավոր դատախազի 2023 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ Գարեգին Իսախանյանի նկատմամբ ***հարուցվել է կարգապահական վարույթ***՝ «Դատախազության մասին» օրենքի 49-րդ հոդվածով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու հիմքով:

3. Գարեգին Իսախանյանը **2014 թվականի հունիսի 23**-ից զբաղեցրել է դատախազի պաշտոնը և շարունակում է պաշտոնավարել մինչ օրս:

4. Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Գարեգին Իսախանյանը հանդիսանում է «ԲԱՐ» ՍՊԸ-ի 53% բաժնեմասի սեփականատերը: Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության դադարման մասին տեղեկություններ միասնական գրանցամատյանում առկա չեն:

5. 2023 թվականի նոյեմբերի 2-ին Հանձնաժողովը կայացրել է թիվ 03/2022 որոշումը՝ Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Գարեգին

Իսախանյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին:

4. 2023 թվականի նոյեմբերի 7-ին թիվ 01/2453-2023 գրությամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկվել է Գարեգին Իսախանյանին՝ միաժամանակ պահանջելով ներկայացնել պարզաբանում վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ՝ կցելով փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր: Փոստային առաքանին Գարեգին Իսախանյանը ստացել է 2023 թվականի նոյեմբերի 9-ին:

5. Վարույթի շրջանակներում 2023 թվականի նոյեմբերի 20-ին /Մ-4545 գրություն/ Գարեգին Իսախանյանի կողմից ներկայացվել է պարզաբանում (այսուհետ՝ Պարզաբանում) և կից փաստաթղթեր՝ 23.07.2016թ. Բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագիր, «Գինտռա» ՍՊԸ-ի միակ մասնակցի 20.06.2014թ. թիվ 2 որոշումը, «Գինտռա» ՍՊԸ-ի միակ մասնակցի 02.10.2014թ. թիվ 3 որոշումը, «Գինտռա» ՍՊԸ-ի գործունեությունը դադարեցված լինելու վերաբերյալ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգից ներբեռնված փաստաթուղթ, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության 03.03.2023թ. «ԲԱՐ» ՍՊԸ մասնակցի փոփոխության, մասնակցի տվյալների փոփոխության և նոր խմբագրությամբ կանոնադրության պետական գրանցումը մերժելու մասին:

6. Վարույթի շրջանակներում «ԲԱՐ» ՍՊ ընկերությունում Գարեգին Իսախանյանի բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնված լինելու վերաբերյալ տվյալներ ստանալու, ինչպես նաև անհամատեղելիության պահանջների պահպանման հնարավոր այլ խախտումներ ի հայտ բերելու նպատակով ուսումնասիրվել են Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալները, ինչպես նաև 2023 թվականի դեկտեմբերի 11-ին հարցում է կատարվել Պետական եկամուտների կոմիտեին:

7. Հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 01/2724-2022 գրությանն ի պատասխան ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 01/71-6/76391-2023 գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝

- Գարեգին Իսախանյանի կողմից (01.07.2017-ից 20.12.2023թթ.) այլ վճարովի աշխատանք կատարելու վերաբերյալ տվյալներ առկա չեն:
- Գարեգին Իսախանյանի կողմից (01.07.2017-ից 20.12.2023թթ.) Ընկերությունից եկամուտ ստանալու վերաբերյալ տվյալներ առկա չեն:
- 2023 թվականի հունիսի 16-ից Ընկերության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է:
- 2018 թվականից սկսած Ընկերությունն ըստ տարիների ունեցել է համապատասխանաբար 2018թ.-ին՝ , 2019թ.-ին՝ 2020թ.-ին՝ , 2021թ.-ին՝ , 2022թ.-ին՝ ՀՀ դրամ իրացման շրջանառություն և 2018թ.-ին՝ ՀՀ դրամ հարկվող շահույթ, 2019թ.-ին՝ , 2020թ.-ին՝ , 2021թ.-ին՝ , 2022թ.-ին՝ ՀՀ դրամ հարկվող վնաս:

8. 2023 թվականի դեկտեմբերի 13-ին թիվ 01/2751-2023 գրությամբ վարույթի շրջանակներում քննարկվող՝ վարույթի մասնակցի կողմից վկայակոչված բարենպաստ հանգամանքների առնչությամբ Հանձնաժողովը պահանջել է առկայության դեպքում ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն՝ համապատասխան փաստական հիմքերով:

9. Ի պատասխան՝ 2023 թվականի դեկտեմբերի 21-ին թիվ Մ-4998-2023 գրությամբ Գարեգին Իսախանյանի կողմից Հանձնաժողով է ներկայացվել 2016 թվականի հուլիսի 23-ին կնքված բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին **2018 թվականի հուլիսի 23-ին** Գարեգին Իսախանյանի և հավատարմագրային կառավարիչ Մելինե Համբարձումյանի միջև կնքված **թիվ 1 համաձայնագրի պատճենը**, համաձայն որի՝ 2016 թվականի հուլիսի 23-ին կնքված «Բար» ՍՊԸ-ի բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագրի 5.2 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ և պայմանագիրը համարվում է վերակնքված յուրաքանչյուր մեկ տարին մեկ, եթե մինչև 2019 թվականի հուլիսի 23-ը կողմերը գրավոր չեն հայտնում պայմանագրային հարաբերությունները չշարունակելու ցանկության մասին:

II.Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթի շրջանակներում քննարկվող հարցերի առնչությամբ Գարեգին Իսախանյանը ***Պարզաբանմամբ հայտնել է հետևյալը***.

1. «Բար» ՍՊԸ-ի ստեղծման վերաբերյալ՝

1.1 «Գինտռա» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2014 թվականի մայիսի 7-ին՝ միակ մասնակից Գարեգին Իսախանյանի կողմից:

1.2 «Գինտռա» ՍՊԸ-ի իր բաժնեմասը 2014 թվականի հուլիսի 23-ին կնքված հավատարմագրային կառավարման պայմանագրով հանձնել է հավատարմագրային կառավարման Մելինե Վիլսոնի Համբարձումյանին:

1.3 Հավատարմագրային կառավարիչ Մելինե Համբարձումյանի 2014 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 3 որոշման համաձայն՝ «Գինտռա» ՍՊԸ-ն միացել է «Ռոստով-Դոն» ՍՊԸ-ին, որի արդյունքում «Գինտռա» ՍՊԸ-ի գործունեությունը դադարեցվել է, և վերջինիս իրավահաջորդ է հանդիսացել «Ռոստով-Դոն» ՍՊԸ-ն:

1.4 «Ռոստով-Դոն» ՍՊԸ-ի մասնակցի, «Ալիշանի կառավարիչ» ՍՊԸ-ի մասնակցի և Գարեգին Իսախանյանի բաժնեմասի հավատարմագրային կառավարչի մասնակցությամբ համատեղ արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ռոստով-Դոն» ՍՊԸ-ն միացել է «Ալիշանի կառավարիչ» ՍՊԸ-ին, որի արդյունքում «Ռոստով-Դոն» ՍՊԸ-ի իրավահաջորդ է դարձել «Ալիշանի կառավարիչ» ՍՊԸ-ն:

1.5 2016 թվականի հուլիսի 23-ին կնքված «Բաժնեմասի հավատարմագրային կառավարման» պայմանագրի համաձայն՝ «Ալիշանի կառավարիչ» ՍՊԸ-ի Գարեգին Իսախանյանին պատկանող անվանական արժեքով 53% բաժնեմասը հանձնվել է հավատարմագրային կառավարման Մելինե Վիլսոնի Համբարձումյանին:

1.6 «Ալիշանի կառավարիչ» ՍՊԸ-ի անվանափոխության արդյունքում 2017 թվականի փետրվարի 22-ին ստեղծվել է «Բար» ՍՊԸ-ն: «Բար» ՍՊԸ-ն հանդիսանում է նրա իրավահաջորդը, որում ունեցած Գարեգին Իսախանյանի բաժնեմասը հանձնված է եղել հավատարմագրային կառավարման:

2. Գարեգին Իսախանյանի բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ Մելինե Համբարձումյանի և Սուրեն Սարգսյանի միջև 2022 թվականի նոյեմբերի 16-ին կնքված

բաժնեմասի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ «Բար» ՍՊԸ-ի՝ Գարեգին Իսախանյանին պատկանող 53% բաժնեմասը վաճառվել է Սուրեն Սարգսյանին:

3. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության 2023 թվականի մարտի 3-ի որոշման համաձայն՝ նշված առուվաճառքի պայմանագրի հիման վրա «ԲԱՐ» ՍՊԸ-ի մասնակցի փոփոխության և նոր խմբագրությամբ կանոնադրության պետական գրանցումը մերժվել է թիվ ՍՆԴ/1050/04/22 սնանկության գործի շրջանակներում Գարեգին Իսախանյանի բաժնեմասն արգելադրված լինելու հիմքով:

4. «Գինտոա» ՍՊԸ-ի իր բաժնեմասը 2014 թվականի հուլիսի 23-ին հավատարմագրային կառավարման հանձնելուց հետո չի մասնակցել նշված ընկերության և վերջինիս իրավահաջորդ հանդիսացած ընկերությունների կառավարմանը և երբևէ շահույթ չի ստացել նշված ընկերությունների գործունեության արդյունքում: «Բար» ՍՊԸ-ի գոյության մասին փաստացի իմացել է բանկից /ամսաթիվը և տարեթիվը հստակ չի հիշում/, երբ իր հերթական վարկային հայտը մերժվել է՝ պատճառաբանելով, որ Գարեգին Իսախանյանը փոխկապակցված անձ է Ընկերության հետ և Ընկերությունը բանկերի հանդեպ ունի չկատարված պարտավորություններ: Այդ ժամանակահատվածում ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրից Ընկերության մասնակից հանդիսանալու վերաբերյալ տեղեկատվության ճշգրտումից հետո սկսել է «Պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի» տարեկան հայտարարագրերում նշել բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալները: Իրավիճակը կարգավորելու նպատակով փորձել է 2022 թվականին օտարել իր բաժնեմասը, սակայն գործարքը պետական գրանցում չի ստացել, քանի որ իր գույքն արգելադրված է /ՍՆԴ/1050/04/22 սնանկության գործ/: Ընկերության հետ որևէ փաստացի առնչություն չունենալը պատճառ է հանդիսացել, որ անուշադրության արդյունքում Ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու հանգամանքը չի նշել տարեկան հայտարարագրերում: Չնշելու փաստը որևէ դիտավորություն չի պարունակել և վերջինս նպատակ չի ունեցել որևէ տվյալ թաքցնելու, այլ դա եղել է տեխնիկական սխալի/վրիպելու հետևանք:

5. 2023 թվականի դեկտեմբերի 21-ին թիվ Մ-4998-2023 գրությամբ Գարեգին Իսախանյանի կողմից Հանձնաժողով է ներկայացվել 2018 թվականի հուլիսի 23-ին կնքված 2016 թվականի հուլիսի 23-ին կնքված բաժնեմասի հավատարմագրային

կառավարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին թիվ 1 համաձայնագրի պատճենը, համաձայն որի՝ 2016 թվականի հուլիսի 23-ին կնքված «Բար» ՍՊԸ-ի բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագրի 5.2 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ և պայմանագիրը համարվում է վերակնքված յուրաքանչյուր մեկ տարին մեկ, եթե մինչև 2019 թվականի հուլիսի 23-ը կողմերը գրավոր չեն հայտնում պայմանագրային հարաբերությունները չշարունակելու ցանկության մասին:

III. Դատախազի գործունեությանն առնչվող տեղեկություններ

Գարեգին Իսախանյանը, ըստ փոխգործելիության հարթակում առկա ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական շտեմարանի տվյալների, 2014 թվականի հունիսի 23-ից աշխատում է դատախազի պաշտոնում, հայտարարագրման էլեկտրոնային ռեեստրում առկա տվյալների համաձայն՝ 2017 թվականի հուլիսի 1-ից զբաղեցնում է ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազի պաշտոնը, իսկ 2022 թվականի մայիսի 22-ից՝ նույն վարչության ավագ դատախազի պաշտոնը:

IV. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

1. Արարատի մարզի դատախազության դատախազ Վ. Առաքելյանի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 23-ին ներկայացված հաղորդման ուսումնասիրության արդյունքում Գլխավոր դատախազի 2023 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ Գարեգին Իսախանյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Դատախազության մասին» օրենքի 49-րդ հոդվածով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու հիմքով:

2. Գարեգին Իսախանյանը **2014 թվականի հունիսի 23**-ից զբաղեցրել է դատախազի պաշտոնը և շարունակում է պաշտոնավարել մինչ օրս:

3. Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ «ԲԱՐ» ՍՊԸ-ն (2014 թվականի մայիսի 7-ին հիմնադրված «Գինտռա» ՍՊԸ-ի, «Ռոստով-

Դոն» ՍՊԸ-ի, այնուհետև՝ «Ալիշանի կառավարիչ» ՍՊԸ-ի իրավահաջորդ) հանդիսանում է առևտրային կազմակերպություն, որի 53% բաժնեմասի սեփականատեր է հանդիսանում Գարեգին Իսախանյանը: Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության դադարման մասին տեղեկություններ միասնական գրանցամատյանում առկա չեն:

4. 2016 թվականի հուլիսի 23-ին կնքված «Բաժնեմասի հավատարմագրային կառավարման» պայմանագրի համաձայն՝ «Ալիշանի կառավարիչ» ՍՊԸ-ի Գարեգին Իսախանյանին պատկանող անվանական արժեքով բաժնեմասը հանձնվել է հավատարմագրային կառավարման Մելինե Վիլսոնի Համբարձումյանին:

5. «Ալիշանի կառավարիչ» ՍՊԸ-ի անվանափոխության արդյունքում 2017 թվականի փետրվարի 22-ին ստեղծվել է «Բար» ՍՊԸ-ն: «Բար» ՍՊԸ-ն հանդիսանում է նրա իրավահաջորդը, որում ունեցած Գարեգին Իսախանյանի բաժնեմասը հանձնված է եղել հավատարմագրային կառավարման:

6. Գարեգին Իսախանյանի բաժնեմասի *հավատարմագրային կառավարիչ Մելինե Համբարձումյանի և Սուրեն Սարգսյանի միջև* 2022 թվականի նոյեմբերի 16-ին կնքված բաժնեմասի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ «Բար» ՍՊԸ-ի՝ Գարեգին Իսախանյանին պատկանող անվանական արժեքով բաժնեմասը վաճառվել է Սուրեն Սարգսյանին:

7. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության 2023 թվականի մարտի 3-ի որոշման համաձայն՝ նշված առուվաճառքի պայմանագրի հիման վրա «ԲԱՐ» ՍՊԸ-ի մասնակցի փոփոխության և նոր խմբագրությամբ կանոնադրության պետական գրանցումը մերժվել է թիվ ՍՆԴ/1050/04/22 սնանկության գործի շրջանակներում Գարեգին Իսախանյանի բաժնեմասն արգելադրված լինելու հիմքով:

8. 2018 թվականի հուլիսի 23-ին Գարեգին Իսախանյանի և հավատարմագրային կառավարիչ Մելինե Համբարձումյանի միջև կնքվել է 2016 թվականի հուլիսի 23-ին կնքված բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին թիվ 1 համաձայնագիրը, համաձայն որի՝ 2016 թվականի հուլիսի 23-ին կնքված «Բար» ՍՊԸ-ի բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագրի 5.2 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ և պայմանագիրը համարվում է վերակնքված

յուրաքանչյուր մեկ տարին մեկ, եթե մինչև 2019 թվականի հուլիսի 23-ը կողմերը գրավոր չեն հայտնում պայմանագրային հարաբերությունները չշարունակելու ցանկության մասին:

9. ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 01/71-6/76391-2023 գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝ Գարեգին Իսախանյանի կողմից այլ վճարովի աշխատանք կատարելու, վերաբերելի ժամանակահատվածում (01.07.2017-ից 20.12.2023թթ.) Ընկերությունից եկամուտ ստանալու վերաբերյալ տվյալներ առկա չեն, 2018 թվականից սկսած Ընկերությունը ունեցել է իրացման շրջանառություն: Միաժամանակ, 2023 թվականի հունիսի 16-ից Ընկերության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է:

10. Գարեգին Իսախանյանի կողմից ներկայացված 2021 և 2022 թվականների «Պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի» տարեկան հայտարարագրերի «Ե.1 Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժիններում տվյալներ են ներկայացվել Ընկերության կանոնադրական կապիտալում ***53% բաժնեմասնակցության վերաբերյալ***: Միաժամանակ, Ընկերության կանոնադրական կապիտալում 53% բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տվյալներ ներկայացված չեն եղել Գարեգին Իսախանյանի կողմից ներկայացված 2021 և 2022 թվականների շահերի հայտարարագրերի՝ «Դ.3 Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» բաժիններում:

V. Անհամատեղելիության պահանջին առաջադրվող ներպետական օրենսդրական կարգավորումներ

1. «Դատախազության մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատախազը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն առևտրային կազմակերպություններում, ***զբաղվել ձեռնարկատիրական***

գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից»:

2. ***«Հանրային ծառայության մասին» օրենքի*** 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***հանրային պաշտոնը*** դասակարգվում է խմբերի՝ **պետական** և համայնքային: Նույն հոդվածի համաձայն՝ պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ***ինքնավար*** և հայեցողական:

3. Նշված օրենքի 7-րդ հոդվածում սահմանված ***ինքնավար պաշտոնների*** շրջանակում ներառված է նաև դատախազի պաշտոնը:

4. Նշված օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **հանրային պաշտոն** զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում ***նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝*** **մեկ ամսվա ընթացքում,** պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:

5. Նույն հոդվածի 7-րդ մասով սահմանվում է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասկացությունը համաձայն որի՝ սույն օրենքի իմաստով **ձեռնարկատիրական գործունեություն է** համարվում՝

(...) **առևտրային կազմակերպության մասնակից լինելը**, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման կամ չի գերազանցում սույն հոդվածի 8-րդ մասի 11-րդ կետում նշված թույլատրելի բաժնեմասնակցությունը:

6. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն

զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ:

7. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության **օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների**, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման **առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ**:

8. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 954-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով մեկ կողմը (կառավարման հիմնադիրը) որոշակի ժամկետով գույք է հանձնում մյուս կողմի (հավատարմագրային կառավարչի) հավատարմագրային կառավարմանը, իսկ մյուս կողմը պարտավորվում է այդ գույքի կառավարումն իրականացնել ի շահ կառավարման հիմնադրի կամ նրա նշած անձի (շահառուի):

9. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 966-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հավատարմագրային կառավարման պայմանագիրը դադարում է հավատարմագրային կառավարման պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում:

10. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ի թիվս այլ դեպքերի, Հանձնաժողովը կարող է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների

խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթ հարուցել յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա:

11. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

VI. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

Դատախազի հանրային պաշտոնը զբաղեցնող անձանց համար ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, ինչպես նաև առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու սահմանափակումն ամրագրված է ինչպես «Դատախազության մասին», այնպես էլ «Հանրային ծառայության մասին» օրենքներով:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը, մասնավորապես, չի արգելում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց որպես սեփականություն ունենալ բաժնեմաս առևտրային կազմակերպությունում՝ բացառությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի (2023 թվականի հունվարի 2-ին ուժի մեջ մտած ՀՕ 540-Ն օրենք) 31-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված դեպքերի, որով մասնավորապես սահմանվում է, որ

- հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնի նշանակվելուց (ընտրվելուց) հետո իրավունք չունեն ձեռք բերելու առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ):

- առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու կամ պաշտոնավարման ընթացքում ժառանգություն ստանալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնն ստանձնելուց կամ ժառանգությունն ընդունելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:

Վերը նշվածից հետևում է, որ օրենսդիրը չի զրկում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքը տնօրինելու իրավունքից, այլ տվյալ պաշտոնը զբաղեցնելու հանգամանքով պայմանավորված՝ նախատեսում է օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն համարվող առևտրային կազմակերպությունում ունեցած բաժնեմասնակցության տնօրինման կոնկրետ եղանակ, այն է, պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն (բաժնետոմս, փայ) ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման՝ դրանով իսկ բացառելով կամ նվազագույնի հասցնելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց մոտ շահերի բախման իրավիճակները: Նման կարգավորումները որևէ կերպ չեն խաթարում անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված, սեփականության հիմնարար իրավունքը, քանի որ անձը, հանձնելով առևտրային կազմակերպությունում իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման, չի փոխանցում իր սեփականության իրավունքը հավատարմագրային կառավարչին, այլ այդ կերպ իրացնում է իր՝ սեփականատիրոջ իրավունքը:

Իրավական սահմանափակումների ներքո ենթադրվում է, որ պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավորվում է գործունեություն իրականացնել իր պաշտոնի նկատմամբ սահմանված իրավական որոշակի սահմանափակումների շրջանակներում: Հետևաբար, նշանակվելով հանրային պաշտոնում՝ իրավունքների ու պարտականությունների հետ մեկտեղ պաշտոնատար անձը ստանձնում է նաև օրենքով սպառիչ կերպով սահմանված սահմանափակումների ներքո գործելու պարտականություն, որը հետապնդում է տվյալ պարագայում դատախազի կողմից բացառապես իր պաշտոնեական լիազորությունների և գործառույթների

իրականացումն ապահովելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց մուտքը դատախազության համակարգ բացառելու օրինաչափ նպատակը:

Վերլուծելով սույն գործով կիրառելի օրենսդրական կարգավորումները՝ պարզ է դառնում, որ օրենսդիրը սահմանել է հստակ ժամկետ՝ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու համար և տվյալ հնարավորությունը սահմանափակել է անձի՝ հանրային կամ հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու (ընտրվելու) դեպքով: Այսինքն, օրենսդիրը սահմանել է պայմաններ հանրային պաշտոն զբաղեցնող անձի՝ առևտրային կազմակերպությունում մասնակցությունը ձեռնարկատիրական գործունեություն չհամարվելու համար: Մասնավորապես, երբ անձը մասնակից է եղել առևտրային կազմակերպությանը մինչև պաշտոնի նշանակվելը և, երբ պաշտոնի նշանակելուց հետո առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն օրենքով սահմանված ժամկետում ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման:

Սույն գործում առկա փաստական հանգամանքների համաձայն՝ Գարեգին Իսախանյանը 2014 թվականի հունիսի 23-ից հանդիսանում է հանրային պաշտոն զբաղեցնող անձ դատախազության համակարգում, և նրա գործունեության նկատմամբ տարածվում են «Դատախազության մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի և «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի կարգավորումները: Հետևաբար, Գարեգին Իսախանյանը պարտավոր էր պաշտոնը ստանձնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Ընկերության իր բաժնեմասն ամբողջությամբ օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:

Տվյալ պարագայում, վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալների, ինչպես նաև Գարեգին Իսախանյանի կողմից Հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և համադրման արդյունքում պարզվել է, որ Ընկերության կանոնադրական կապիտալի 53% բաժնեմասը 2016 թվականի հուլիսի 23-ից որոշակի ժամկետով հանձնված է եղել հավատարմագրային կառավարման և ըստ պայմանագրի 5.1 կետի՝ պայմանագիրը գործել է մինչև 2017 թվականի հուլիսի 23-ը: Պայմանագրի 5.2 կետի համաձայն՝ մինչև 2017 թվականի հուլիսի 23-ը պայմանագրային հարաբերությունները չշարունակելու ցանկության մասին չհայտնելու պարագայում

պայմանագիրը շարունակել է գործել մինչև 2018 թվականի հուլիսի 23-ը, իսկ Պայմանագրի մեկ այլ՝ 5.4 կետով սահմանված է, որ պայմանագրում կատարվող փոփոխություններն ու լրացումները կողմերը պետք է քննարկեն մեկամսյա ժամկետում և ձևակերպեն Հավելվածով: Միաժամանակ, վարույթի մասնակցի կողմից Պարզաբանմամբ վկայակոչված հանգամանքներից հետևում է, որ առնվազն 2022 թվականի նոյեմբերի 16-ի դրությամբ «Բար» ՍՊԸ-ի՝ Գարեգին Իսախանյանին սեփականության իրավունքով պատկանող 53% բաժնեմասի օտարման գործընթացում Պայմանագրի կողմ է հանդիսացել վերջինիս բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ Մելինե Վիլսոնի Համբարձումյանը:

Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը «Վարչարարության և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ այդ թվում վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման վերաբերյալ օրենսդրական պահանջից ելնելով, ինչպես նաև հիմք ընդունելով 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված ապացուցման բեռի բաշխման դրույթը՝ 2023 թվականի դեկտեմբերի 13-ին Գարեգին Իսախանյանին է հասցեագրել թիվ 01/2751-2023 գրությունը՝ վերջինիս կողմից վկայակոչված բարենպաստ հանգամանքները հիմնավորող փաստական հիմքերը, առկայության դեպքում, Հանձնաժողովին 5-օրյա ժամկետում տրամադրելու վերաբերյալ:

Վերոնշյալ գրության ստացումից հետո վարույթի մասնակցի կողմից Հանձնաժողով է ներկայացվել 2016 թվականի հուլիսի 23-ին կնքված բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին 2018 թվականի հուլիսի 23-ին Գարեգին Իսախանյանի և հավատարմագրային կառավարիչ Մելինե Համբարձումյանի միջև կնքված թիվ 1 համաձայնագրի պատճենը, համաձայն որի՝ 2016 թվականի հուլիսի 23-ին կնքված «Բար» ՍՊԸ-ի բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագրի 5.2 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ և պայմանագիրը համարվում է վերակնքված յուրաքանչյուր մեկ տարին մեկ, եթե մինչև 2019 թվականի հուլիսի 23-ը կողմերը գրավոր չեն հայտնում պայմանագրային հարաբերությունները չշարունակելու ցանկության մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը:

2022 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունված ՀՕ-543-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2023 թվականի հունվարի 3-ին) «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին»» օրենքը լրացվել է 40.1-րդ հոդվածով, որի 2-րդ մասի համաձայն՝ ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, պետական գրանցում կատարելու համար շահագրգիռ անձը ներկայացնում է նույն մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում նաև՝ բաժնեմասի կամ դրա մասի հավատարմագրային կառավարման հանձնելու հիմքը, պայմանագիրը: Ընդ որում, 2022 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունված ՀՕ-543-Ն օրենքով սահմանված է, որ օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, և առկա չէ որևէ անցումային դրույթի իրավակարգավորում առ այն, որ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը կնքված պայմանագրերը ևս ենթակա են ներկայացման ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

Ելնելով վերոնշյալ իրավակարգավորումներից՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունված ՀՕ-543-Ն օրենքի ուժի մեջ մտնելը (ուժի մեջ է մտել 2023 թվականի հունվարի 3-ին) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տեղեկությունների գրառման պահանջ օրենսդրությամբ սահմանված չի եղել: Հետևաբար, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը առևտրային կազմակերպության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տեղեկություններ պարունակող միասնական պետական գրանցամատյանը սկսել է վարել 2023 թվականի հունվարի 3-ից հետո կնքվող և գործակալություն ներկայացվող հավատարմագրային կառավարման պայմանագրերի մասով:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև նշված իրավակարգավորումների ուժի մեջ մտնելը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը հավատարմագրային կառավարման պայմանագրերի պարտադիր հաշվառման միասնական պետական գրանցամատյան չի վարել, Հանձնաժողովը օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել ձեռք բերելու նշված փաստական հանգամանքի վերաբերյալ որևէ այլ ապացույց, որպիսի հանգամանքներում վարչական մարմինն առաջնորդվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված ապացուցման բեռի բաշխման կանոնակարգումների, ինչպես նաև նույն օրենքով սահմանված վարչարարության հիմնարար սկզբունք հանդիսացող հավաստիության կանխավարկածով, որի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով: Նշված իրավանորմով պայմանավորված՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ իր կողմից նախկինում կայացված որոշումներին, մասնավորապես՝ 2023 թվականի մարտի 27-ի թիվ 06/2022-2023 եզրակացությամբ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու խախտմանն առնչվող գործով արձանագրել է անհամատեղելիության պահանջների խախտման բացակայություն՝ որպես պատճառաբանություն նշելով, որ Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասը որոշակի ժամկետով հանձնված է եղել հավատարմագրային կառավարման: Բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հանգամանքով պայմանավորված՝ պայմանագրում փոփոխություն կատարելու՝ պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու, վերաբերյալ կնքված համաձայնագրով բաժնեմասի հավատարմագրային կառավարումը երկարաձգվել է: Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության բաժնեմասը պաշտոնատար անձի

կողմից պաշտոնը ստանձնելիս արդեն իսկ հանձնված է եղել հավատարմագրային կառավարման:

Տվյալ պարագայում, վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալների, ինչպես նաև վարույթի մասնակցի կողմից Հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և համադրման արդյունքում պարզվել է, որ Հանձնաժողովի կողմից նշված եզրակացությամբ հաստատված փաստական համապատասխան հանգամանքների և սույն գործով առկա հանգամանքների միջև առևտրային կազմակերպությունում բաժնեմասնակության ուժով օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեությամբ չզբաղվելու արգելքի մասով էական տարբերություն առկա չէ:

Վերոնշյալ փաստերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրակացնում է, որ Գագիկ Իսախանյանի կողմից չեն խախտվել հանրային պաշտոն զբաղեցնող անձին ներկայացվող անհամատեղելիության պահանջները:

Արդյունքում, վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների համադրումից և վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից Հանձնաժողովը ***եզրահանգում է,*** որ *սույն գործով քննարկված փաստական հանգամանքների շրջանակներում* Գագիկ Իսախանյանն իր գործողություններով պահպանել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 33-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Գարեգին

Իսախանյանի կողմից չեն խախտվել հանրային պաշտոնին օրենսդրությամբ ներկայացվող անհամատեղելիության պահանջները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**